ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՒ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐԵԱՆ
lilit_zakaryan@mail.ru

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Անկախութիւնը ցանկացած *ազգի* ազգի նուիրական երազանքն է: Բացառութիւն չեն եղել նաեւ հայերը, որոնք անկախութեան բացակայութեան պայմաններում *Որոգայթ փառաց*[1] են հեղինակել, Կ. Պոլսում ազգային Ժողով[2] ստեղծել:

1918ի ծանրագոյն պայմաններում ստեղծուած Հայաստանի Հանրապետութիւնը երկար կեանք չունեցաւ: Հայաստանը դարձաւ խորհրդային միութենական հանրապետութիւն, որն ապահովեց հայ ազգի ֆիզիկական գոյութիւնը եւ ընկերային-տնտեսական ու մշակութային աննախադէպ զարգացումը: Իրատեսական եւ առաւել առաջնահերթ օրակարգերի պատճառներով անկախութեան մասին երազանքները խնամքով թաքցւում էին, անկախութիւնը տեսանելի մօտ չէր երեւում:

Ամէն ինչ սկսեց փոխուել խորհրդային «վերակառուցման»[3] պայմաններում արցախեան շարժման ընթացքում, որի շնորհիւ տեղի ունե-

---

[1] Այն հայ պատմաիրաւական մտքի կարեւորագոյն փաստաթղթերից է, ստեղծուել է 1773ին, Մադրասի խմբակի հայ լուսաւորիչ Շահամիր Շահամիրեանի ջանքերով: Հնդկահայերը՝ Ռուսաստանի ցարուհի Եկատերինա Բ.ի վարած ծաւալապաշտական քաղաքականութեան շնորհիւ, շօշափելի մօտ էին տեսնում Հայաստանի ազատագրումը եւ այս փաստաթուղթը ստեղծեցին ապագայ անկախացած Հայաստանի Հանրապետութեան համար (*Հայոց պատմութիւն, հատոր III, գիրք առաջին*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2010, էջ 172-74):

[2] ԺԹ. դարի կէսերին Օսմանյան կայսրութիւնը դարձել էր մեծ տէրութիւններից կախեալ երկիր, ուր բախւում էին այդ երկրների շահերն ու հակասութիւնները: Ներքին կեանքում դա *թանզիմաթ*ների շրջան էր, որոնց նկատմամբ թուրք ժողովուրդը անտարբեր էր, սակայն այն ոգեւորեց կայսրութեան հպատակ հայերին եւ այլ քրիստոնեայ ժողովուրդներին: Կ.Պոլսի հայերը փորձեցին ստեղծել համայնքի կեանքը կարգաւորող ներքին ինքնավարութեան մարմիններ: 1847ին Պոլսում ստեղծուեցին հոգեւոր (14 հոգեւորականներից կազմուած) եւ գերագոյն (20 աշխարհականներից կազմուած) ժողովները: 1860-63՝ արեւմտահայերի սահմանադրական շարժումը յանգեցրեց Պոլսի ազգային ժողովի ստեղծմանը: Այն զբաղւում էր արեւմտահայութեան մշակութային, ընկերա-քաղաքական, գաւառահայութեան հարստահարութիւնների եւ այլ հարցերով:

[3] «Վերակառուցում» (ռուսերէն Պերեստրոյկա) անուանումը մատնանշում է ԽՍՀՄ տնտեսական եւ քաղաքական կառուցուածքում հիմնարար փոփոխութիւնների քաղաքականութիւնը, որը նախաձեռնել է ԽՄԿԿ կենտկոմի գլխաւոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը 1985-91ին: Բարեփոխումների յայտարարուած նպատակը

ցաւ ազգային ինքնագիտակցութեան աճ եւ մէկ գաղափարի շուրջ ազգի համախմբում: Անկախութեան հայտի ձեւաւորումը երեք փուլով անցաւ եւ ընդգրկեց 1988-1991 շրջանը: Առաջին փուլում այն իշխող գաղափար դարձաւ ցոյցերում ձեւաւորուած հասարակական կարծիքում, այնուհետեւ տեղափոխուեց եւ զարգացուեց խորհրդարանում: Անկախութիւնը գաղափարից իրականութիւն դառնալու ճանապարհին ձեւակերպուեց հռչակագրով (երկրորդ փուլ) եւ հաստատուեց հանրաքուէով (երրորդ փուլ): Այդ փուլերի ընթացքում մշակուեց եւ գործադրուեց անկախութեան օրակարգը:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ.- ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՒ ԴՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Արցախեան շարժման սկզբում անկախութեան հարց չէր դրւում, քանի որ ԽՍՀՄը համարւում էր հայ ժողովրդի գոյի միակ երաշխիքը: Բացի այդ, յոյս կար, որ վերակառուցման պայմաններում ղարաբաղեան հարցը կը լուծուի, պատմական արդարութիւնը կը յաղթանակի:

Սումգայիթեան ոճրագործութիւնը[4] եւ դրա վերաբերեալ ԽՍՀՄ դատախազութեան յանցագործութիւնը կոծկելու միտումը, յետագայում հայկական ջարդերը Ադրբեջանի այլ վայրերում, սկսեց փլուզել ԽՍՀՄում պաշտպանուածութեան փաստը[5]: 1988 Մարտի 21ի *Պրաւդա* թերթում, որը խոր-

---

ԽՍՀՄ ընկերա-քաղաքական եւ տնտեսական համակարգի համակողմանի ժողովրդավարացումն էր: Այդ քաղաքականութեան շնորհիւ խորհրդային հասարակութիւնը ճաշակեց խօսքի մասնակի ազատութիւն, հրապարակայնութիւն, վերացուեց խիստ գրաքննութիւնը, թոյլատրուեց բազմակարծութիւնը եւն.:

[4] 1988 Փետրուարի 27ից 29 Խորհրդային Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում ադրբեջանական իշխանութիւնների կողմից պետական մակարդակով կազմակերպուեց քաղաքի հայ բնակչութեան կոտորած եւ զանգուածային տեղահանութիւն: Միայն ջարդերի երրորդ օրը, երբ արդէն սկսել էին սպառնալ նաեւ ռուսներին եւ հակախորհրդային կոչեր հնչեցին, խորհրդային զօրքը մտաւ քաղաք:

[5] *Երեկոյեան Երեւան*, 25 Նոյեմբերի 1988 «Դիմում Սովետական Հայաստանի աշխատաւորներին»https://tert.nla.am/archive/NLA%20TERT/ErekoyanErevan/1988/273_ocr.pdf . նաեւ՝ *Երեկոյեան Երեւան*, 26 Նոյեմբերի 1988 «Արմենպրէսի հաղորդագրութիւնը»https://tert.nla.am/archive/NLA%20TERT/ErekoyanErevan/1988/274_ocr.pdf . նաեւ՝ *Երեկոյեան Երեւան*, 30 Նոյեմբերի 1988 «Կայազօրի զինուորական պարետի կողմից», «Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի Ադրբեջանական ՍՍՀից փախստականների հարցերի յանձնաժողովում», https://tert.nla.am/archive/NLA%20TERT/ErekoyanErevan/1988/277_ocr.pdf . նաեւ՝ Ալ. Ղեւոնդեան., Ալ. Մանասեան, *Լեռնային Ղարաբախ. Ինչպէս է դա եղել…*, Երեւան, ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատուութեան կենտրոն» ՊՈԱԿ, 2011, էջ 93-105 (http://publishing.ysu.am/files/офицера МВД СССР («Ապստամբ Ղարաբաղ. ԽՍՀՄ ՆԳՆ սպայի օրագրից»),

հրդային գաղափարախօսութեան շեփորահարն էր, տրուեց արցախեան շարժման պաշտօնական տեսակէտի հաղորդումը՝ Ղարաբաղի հարցը պարբերաբար բարձրացուել է «*որպէս կանոն՝ այն պահերին, երբ Հայաստանի որոշ ղեկավարների համար ձեռնտու է եղել հասարակութեան կարծիքը շեղել մի շարք չլուծուած տնտեսական ու ընկերային հարցերից, կուսակցական կազմակերպութեան աշխատանքի ոչ-պիտանի ոճից եւ մեթոդներից*»[6]: Մեղքը բարդուեց Խորհրդային Հայաստանի ղեկավարութեան վրայ եւ առաջ քաշուեց արտաքին ուժերի ազդեցութեամբ արցախեան շարժման նախապէս ծրագրուածութեան, «*ժողովրդական յուզումների անցկացման վաղուց մտածուած, խմանքով նախապատրաստուած*» ծրագրի վարկածը:

1988 Մարտի 23ին ՀԽՍՀ գերագոյն խորհրդի նախագահութիւնը ընդունեց «Հանրապետութեան քաղաքներում ու շրջաններում քաղաքացիների նախաձեռնութեամբ կազմակերպուող ժողովների եւ այլ մասսայական միջոցառումների անցկացման ժամանակաւոր կանոնների մասին» որոշումը, որով «Ղարաբաղ»[7] կոմիտէն (ՂԿ) յայտարարուեց անօրինական, իսկ խորհրդային մամուլում ծաւալուեց հակահայկական քարոզարշաւ: Մամուլում ներկայացուող տեղեկատուութիւնը հակասում էր այն տեղեկատուութեանը, որը ժողովուրդը ստանում էր Ազատութեան հրապարակից, որը դեռեւս չէր դարձել Անկախութեան հրապարակ[8]: Առանձին անկախութեան կոչերը այս շրջանում ոչ միայն չէին ընդունում ժողովրդի կողմից, այլեւ յաճախ զայրոյթ եւ տարակուսանք էին առաջացնում նոյնիսկ ՂԿ շատ անդամների մօտ: Հիմնական հակափաստարկը Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքն էր, «անյաջող» հարեւաններով շրջապատուած լինելը եւ գոյապահպանութիւնը:

Սակայն ԽՍՀՄում ապահով լինելու փաստը աստիճանաբար սկսեց ոչնչանալ, ընդ որում ԽՍՀՄ ղեկավարութիւնը կարծես նպաստէր դրան: Այս-

---

[6] *Правда*, 21 Մարտ 1988:

[7] Ղարաբաղեան շարժումը սկսուեց 1988 Փետրուարի 11ի Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան կազմի մէջ գտնուող Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) մայրաքաղաք Ստեփանակերտի եւ այլ շրջաններում սկսած գործադուլներից ու զանգուածային ցոյցերից: Հայաստանում ձեւաւորուեց մարդկանց մի խումբ, որը փորձեց ղեկավարել շարժումը: Այդ խումբը կոչուեց Ղարաբաղեան շարժման Հայաստանի կոմիտէ կամ ՂԿ:

[8] Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալեէտի ազգային ակադեմիական թատրոնի շէնքի բակում՝ թատերական հրապարակում էին յաճախ անցկացուում արցախեան շարժման բազմահազարանոց ցոյցերը, այդ պատճառով 1991ին այն վերանուանուեց Ազատութեան հրապարակ, սակայն ցոյցերի ընթացքում, երբ հասարակութիւնը ընդունեց անկախութեան գաղափարը, այն ցուցարարների կողմից սկսեց անուանուել Անկախութեան հրապարակ:

պէս, երկրի նախագահ Գորբաչովը[9] հայ մտավորականներ Զորի Բալայեանի եւ Սիլվա Կապուտիկեանի հետ հանդիպման ժամանակ մտահոգութիւն է յայտնել Ադրբեջանում հայերի անվտանգութեան վերաբերեալ, ըստ էութեան մատնանշելով, որ չի կարող երաշխիքներ տալ Ադրբեջանի հայութեան անվտանգութեան համար[10]: 1988 Մարտին Մոսկուայում տուած ասուլիսից յետոյ ձերբակալուել էր եւ Երեւան տեղափոխուելով պետական անվտանգութեան կոմիտէի (ՊԱԿ) բանտում մեկուսացուել անկախութեան ջատագով, նախկին քաղբանտարկեալ Պարոյր Հայրիկեանը[11]:

1988 Յունիսի 28ին իր աշխատանքը սկսեց Կոմունիստական կուսակցութեան համամիութենական 19րդ համագումարը, որի հետ բաւականին մեծ յոյսեր էին կապւում: Համագումարից յետոյ Խ. Հայաստանի Կոմկուսի ղեկավարութիւնը հակաանկախական քարոզչարշաւ կազմակերպեց: Քարոզչութեան նպատակով օգտագործւում էին հանրապետութեան յարգուած եւ հեղինակութիւն ունեցող մարդիկ՝ կաթողիկոսը, յայտնի մտաւորականներ, որոնք զգուշացնում էին պայքարի շարունակման վտանգաւորութեան մասին եւ անհանգստութիւն յայտնում հանրապետութիւնից դուրս ապրող հայերի կեանքի համար, խոհեմութեան կոչեր անում: 1988 Մայիսի կէսերին Վանօ Սիրադեղեանը, քննադատելով Կապուտիկեանին, որը Մոսկուա յղած իր նամակում գրել էր, որ հայերի համար բացի ԽՍՀՄից այլընտրանք չկայ, ասում էր. «*Մենք պէտք է գտնենք այլ տարբերակ, պետութեան տարբերակը: Մենք ազգովի եկանք այդ մտքին՝ ազգովի հեռանալ այստեղից: Պայքարել եւ մեռնել*»[12]: Վտանգները մեծ էին, ԽՍՀՄը դեռ հզօր պետութիւն էր թւում: Միասնութիւն՝ ՂԿ անդամների միջեւ այդ հարցում, չկար:

Որքան արագ էին զարգանում իրադարձութիւնները, այնքան արագ փոխւում էին կոմիտէականների հայեացքները: Արդէն 1988 Յունիսի կէսերին ՂԿ անդամ Ռաֆայել Ղազարեանը[13], նշում էր, որ իրենք այլեւս միամիտ չեն եւ չեն հաւատում հակավերակառուցողական ուժերի առկայութեա-

---

[9] Տե՛ս՝ ծանօթ. 3:

[10] Ֆելիքս Մովսիսեան, «Արցախեան ազգային շարժումը խորհրդային կենտրոնական մամուլի գնահատմամբ», *ԱրՊՀ գիտական ընթերցումներ* (2018), էջ 441, https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/10/Movsisyan-Feliks-Artsakhyan-azgayin-sharjum.pdf :

[11] Պարոյր Հայրիկեան.- հայ քաղաքական գործիչ, խորհրդային այլախոհ, 1967ից Խորհրդային Հայաստանում գաղտնի գործող Ազգային միացեալ կուսակցութեան անդամ, Ազգային ինքնորոշում միաւորում կուսակցութեան առաջնորդ: ԽՍՀՄում չորս անգամ դատապարտուել է քաղաքական գործունէութեան համար, 1968-87՝ գտնուել է կալանքի տակ: 1987ին գաղտնի հրատարակուած *Անկախութիւն* թերթի ստեղծողն է:

[12] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ 1678, ց. 1, գ. 1, էջ 26:

[13] Ռաֆայէլ Ղազարեան.- ռադիոֆիզիկոս, տեխնիկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՂԿ անդամ:

նը, իսկ Իգոր Մուրադեանն[14] Մայիսի վերջին յայտարարեց. «*Պէտք է ասել ճշմարտութիւնը, որից մենք վախենում ենք՝ խորհրդային պետութիւնը, Գորբաչովը չեն ուզում լուծել մեր հարցը*»[15]: Խնդիրն այն էր, որ բազմազգ ԽՍՀՄում միջհանրապետական այդպիսի խնդիրներ շատ կային եւ ԽՍՀՄ ղեկավարութիւնը մտավախութիւն ունէր, որ դա շղթայական փոխազդեցութիւն կարող է առաջացնել եւ ինքորոշման խնդիրներ կ'առաջադրեն նաեւ այլ խորհրդային հանրապետութիւնների ազգային փոքրամասնութիւններ:

Շարժման սկզբից կէս տարի անց ՂԿ գործիչների մեծ մասը եկաւ անկախութեան հնարաւորութեան, որպէս զարգացման այլընտրանքային տարբերակի գիտակցմանը, բայց հայ հասարակութեան վերաբերմունքը դեռ միանշանակ չէր:

1988 Յուլիսի 18ին Անդրէյ Գրոմիկոյի[16] նախագահութեամբ տեղի ունեցաւ ԽՍՀՄ գերագոյն խորհրդի նախագահութեան նիստ, որտեղ պետք է քննարկուէր ԼՂԻՄի հարցը: Այդ նիստի հետ հայ հասարակութիւնը մեծ յոյսեր էր կապում: Սակայն այդտեղ պաշտպանուեց տարածքային ամբողջականութեան սկզբունքը եւ մերժուեց ԼՂԻՄ միացումը Հայաստանին: Նիստը պարզորոշ ցոյց տուեց, որ «վերակառուցման» հետ յոյսեր պէտք չի կապել եւ Արցախի հարցը ԽՍՀՄում չի լուծուելու: Այն լուրջ դժգոհութիւն առաջացրեց հայ հասարակութեան մէջ եւ Մատենադարանի հարթակում Յուլիսի 20ին կազմակերպուած ցոյցի ժամանակ հնչեց գործադուլ անելու պահանջը: Ելոյթ ունենալով ցուցարարների առջեւ, Վազգէն Մանուկեանը նշեց. «*Նորից յիշենք, որ Ղարաբաղում տասնեակ հազարաւոր հայեր յուսահատ վիճակում են, եւ նրանց միակ ապաւէնը մենք ենք: Նրանց պաշտպանը Խորհրդային Միութիւնը չէ, Միացեալ Նահանգները չէ, ուրիշները չեն, մենք ենք միայն: Եւ դրա համար պէտք է ուժեղ լինենք, կարողանանք պահպանել մեզ, որպէսզի նեցուկ լինենք Ղարաբաղի ժողովրդին*»[17]: Շարժումը ազգային-ազատագրականից աստիճանաբար վերածւում էր հակասովետական-անկախականի: Արդէն 1988 Յուլիսի կէսերից ՂԿ կոչին հետեւելով մարդիկ զանգուածաբար սկսեցին յանձնել կոմերիտմիութեան եւ Կոմունի-

---

[14] Իգոր Մուրադեան.- քաղաքագէտ, տնտեսական գիտութիւնների թեկնածու, ՂԿի նախաձեռնող:

[15] ՀԱԱ, ֆ 1678, ց. 1, գ. 1, էջ 26:

[16] Անդրէյ Գրոմիկօ.- ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի նախագահութեան նախագահ (1985-88): ԽՄԿԿ կենտկոմի քաղբիւրոյի անդամ (1973-88):

[17] Վ. Մանուկեանի ելոյթից Մատենադարան հարթակում, 1988 Յուլիսի 20ին (https://vazgenmanukyan.am/%D5%AD%D5%BD%D5%B0%D5%B4-%D5%A3%D5%AD-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%BD%D5%AB-18-%D5%AB-%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8/):

ստական կուսակցութեան անդամութեան տոմսերը: Աշխատանք էր տարում հանրապետութեան բարձրագոյն եւ տեղական կառավարման մարմինների պատգամաւորների, գործարանների, մեծ ազդեցութիւն ունեցող հիմնարկ-կազմակերպութիւնների ղեկավար անձնակազմը ղարաբաղեան շարժման կողմը գրաւելու:

1988 Յուլիսի 17ին Երեւանի քաղաքային կոմիտէի առաջին քարտուղար Միխայիլ Ս.Մինասբէկեանի ելոյթում նշուեց, որ ղարաբաղեան շարժման գործիչները փորձում են հսկողութեան տակ վերցնել քաղաքական համակարգը: Երեւան մտցուեցին խորհրդային բանակի ստորաբաժանումներ: ՂԿ ներսում տարակարծութիւնները սրուեցին. զէնքի դիմելու կոչով հանդէս գալու պատճառով կոմիտէից հեռացուեց Մուրադեանը:

Իրադարձութիւնները զարգանում էին մեծ արագութեամբ: Հայաստանում արդէն 1988 Օգոստոս-Սեպտեմբերին հասարակական գիտակցութեան մէջ փոփոխութիւններ նկատուեցին: 1988 Սեպտեմբերի 9ին Ազատութեան հրապարակում հաւաքուածները առաջին անգամ վանկարկեցին «Ան-կա-խու-թիւն» բառը: Այսպիսով, անկախութեան գաղափարը ընդունուեց հրապարակի բազմահազարանոց ցուցարարների կողմից, սակայն ժամանակ էր հարկաւոր, որ այն հարազատ դառնար ամբողջ հասարակութեան համար:

Հայոց համազգային շարժման (ՀՀՇ)[18] ղեկավարութիւնը սկսեց քննարկել ազգային պատմական հիմնահարցերը, նպատակ հետապնդելով՝ յաղթահարել 1915ից յետոյ առաջացած բարդոյթները: Քննարկումը վերաճեց բանա-վէճի, որը հրապարակից տեղափոխուեց մամուլի էջեր: Այդ հարցում կար 2 կարծիք.-

1. ՀՀՇի կողմից քարոզուող գաղափարը թէ՝ պանթուրքիզմը հնացած կատեգորիա է, աշխարհը փոխուել է եւ հայ ժողովրդին Թուրքիայի կողմից սպառնացող վտանգ չկայ:

---

[18] Խորհրդային Հայաստանը միակուսակցական էր, ինչպէս ամբողջ ԽՍՀՄը: 1987-88՝ վերակառուցման պայմաններում սկսեցին կազմաւորուել քաղաքական տարբեր կազմակերպութիւններ: 1988ին ստեղծուած ՀՀՇն ամենազդեցիկն էր: Ստեղծուելով որպէս Ղարաբաղը մայր Հայրենիքի հետ միաւորելու շարժում, այն աստիճանաբար վերածուեց անկախական շարժման, միաւորելով կոմունիստական վարչակարգից կամ դրա առանձին դրսեւորումներից դժգոհ բոլոր տարրերին: ՀՀՇ առաջին ծրագրային դրոյթները, որոնց հեղինակը ՂԿ անդամ, յետագայում ՀՀ վարչապետ Վազգէն Մանուկեանն էր, հրապարակուեցին դեռեւս 1988 Օգոստոսին Երեւանի Ազատութեան հրապարակում: ՀՀՇի երկու անդամներ ընտրուեցին ՀԽՍՀ ԳԽի կազմում դեռեւս 1988 Հոկտեմբերին, ինչը այն ժամանակների համար չտեսնուած յաջողութիւն էր: 1989 Նոյեմբերի 4-7 տեղի ունեցաւ ՀՀՇ առաջին համագումարը, որին մասնակցեցին նաեւ ՀԽՍՀ իշխանութեան ներկայացուցիչներ, ինչը նոյնպէս մեծ յաջողութիւն էր:

2. Երկրորդ կարծիքն այն էր, թէ՝ ժողովուրդը չպէտք է մոռանայ իր անցեալը, հայ ժողովրդի ապագան եւ անվտանգութիւնը կապուած են ԽՍՀՄի հետ: Այս կարծիքի կողմնակիցները հիմնականում յայտնի մտաւորականներ էին, հանրապետութիւնում ճանաչուած մարդիկ:

Հասարակութեան հաւաքական կարծիքը, եթէ առաջ միանշանակ երկրորդ ուղղութեան կողմն էր, ապա խորհրդային իշխանութիւնների քաղաքականութեան հետեւանքով աստիճանաբար թեքւում էր առաջինի կողմը: Աստիճանաբար պայքարը հրապարակից տեղափոխւում էր գերագոյն խորհրդի նիստերի դահլիճ: 1988 Նոյեմբերին պատգամաւոր ընտրուեցին ՀՀՇ անդամներ Խաչիկ Ստամբոլցեանը եւ Աշոտ Մանուչարեանը:

Հոկտեմբերեան յեղափոխութեան հերթական տարեդարձի օրը, 1988 Նոյեմբերի 7ին, առաջին անգամ Երեւանում շքերթին մասնակից ժողովուրդը Լենինի հրապարակ մտաւ հակակոմունիստական կարգախօսներով:

Եթէ մինչ այդ օգտագործւում էր *սուվերէնութիւն* (գերիշխանութիւն) բառը, որը նախատեսում էր քաղաքական իրաւունքների ընդլայնում ԽՍՀՄ կազմում, ապա արդէն 1988 Նոյեմբերի երկրորդ կէսից բացայայտ սկսեցին խօսել անկախութեան մասին, նշելով, որ պէտք է ազատուել «ստրուկի հոգեբանութիւնից» եւ որ Հայաստանը թէ՛ տնտեսապէս, թէ՛ քաղաքականապէս կարող է ինքնուրոյն գոյատեւել:

1988 Նոյեմբերի 22ին, քաղաքական լարուած մթնոլորտում սկսուեց Հայկական ԽՍՀ գերագոյն խորհրդի հերթական նստաշրջանը: Տագնապալի շրջան էր: Բաքուից եկող լուրերի համաձայն ցոյցերի ժամանակ առաջ էր քաշուել «Մահ հայերին» կարգախօսը[19]: Ուժեղացել էր Ադրբեջանից հայ փախստականների ներհոսքը Հայաստան, ինչը աւելի էր բարդացնում ընկերա-տնտեսական եւ քաղաքական իրավիճակը: Առանձնապէս լարուել էր իրավիճակը Հայաստանի խառը ազգաբնակչութիւն ունեցող շրջաններում: Ադրբեջանից եկող լուրերը ոչ մի լաւ բան չէին կանխորոշում, հայկական տարածքների վրայ յարձակման վտանգ կար եւ Հայաստանում տարերայնօրէն սկսուել էր պաշտպանական ջոկատների կազմակերպումը: Անկախական տրամադրութիւնները անհանգստացնում էին խորհրդային իշխանութիւններին եւ 1988 Նոյեմբերի 24ին Երեւանում, իսկ այնուհետեւ նաեւ 16 շրջաններում պարետային ժամ մտցուեց:

Քաղաքական շահարկման առարկայ դարձաւ նոյնիսկ 1988 Դեկտեմբերի 7ի Սպիտակի երկրաշարժը: Իշխանութեան մարմիններն անընդհատ յիշեցնում էին, որ երկրաշարժի վնասները կարող են վերացուել միայն ԽՍՀՄ այլ հանրապետութիւնների օգնութեամբ: ՀՀՇն իր հերթին առաջ քաշեց «արհեստական երկաշարժ»ի վարկածը: Աշխարհի տարբեր ծայրերից Հա-

---

[19] Բ. Ուլուբաբեան, *Արցախի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը*, Մ. Վարանդեան, Երեւան, 1994, էջ 283 (https://www.historyofarmenia-am.armin.am/images/menus/61/artsaxi%20patm.pdf):

յաստան եկող օգնութիւնը ՀՀՇ ղեկավարները օգտագործում էին որպէս ապացոյց, որ «աշխարհը փոխուել է» եւ որ անկախութեան դէպքում Հայաստանը ապահով կը լինի նաեւ աշխարհի ժողովուրդների ընտանիքում:

ԽՍՀՄում աւանդաբար Մայիսի մէկը տօնւում էր որպէս աշխատաւորութեան տօն, բոլոր հանրապետութիւններում քաղաքների կենտրոնական հրապարակներում շքերթեր էին կազմակերպւում: Սակայն 1989ին, վախենալով «անկախատեսելի հետեւանքներից», խորհրդահայ իշխանութիւնները որոշեցին չանցկացնել Մայիսի մէկի շքերթը: Մինչ, շարժման ղեկավարները պատրուակ բռնելով, որ ցանկանում են շնորհակալութիւն յայտնել երկրաշարժից յետոյ օգնութիւն ցոյց տուած երկրներին, Մայիսի 1ին երթեր կազմակերպեցին Երեւանում, իսկ Մատենադարանի մօտ հաւաք եղաւ, ուր անարգուեցին ԽՍՀՄ կարմիր դրօշը եւ զինանշանը:

Անկախութեան մասին ամէնուրեք բացայայտ խօսւում էր: Սակայն մեծ զգուշաւորութիւն էր ցոյց տալիս այդ հարցում մտաւորականութիւնը: Այսպէս, 1989 Մայիսի 11ի *Սովետական Հայաստան* թերթում հրապարակուեց Սօս Սարգսեանի «Խառը ժամանակների խառը մտքեր» յօդուածը, ուր հեղինակը արտայայտեց թերեւս մտաւորականութեան մի մասի ունեցած հետեւեալ մտավախութիւնը. «*Խորհրդային Միութեան ամբողջականութիւնն այսօր մեր, հայերիս մասնաւոր, առանձնակի, կենսական անհրաժեշտութիւնն է: Այդ է թելադրում ճակատագիրը, պատմութիւնը, կեանքը, մեր ապագան: Մենք ուրիշ ալտերնատիւ չունենք*»[20]: Մինչդեռ հանրապետութիւնում շարունակւում էր ազգային արժէքների վերագնահատման գործընթացը:

1989 Մայիսին ՀԽՍՀ ԳԽի հրամանագրի համաձայն 1918 Մայիսի 28ը ճանաչուեց հայկական պետականութեան վերականգման օր, իսկ եռագոյն դրօշը՝ հայկական ազգային խորհրդանիշ: Մամուլի էջերում յաճախակի դարձան պատմական անցեալը վերագնահատող յօդուածները:

1989 Յունիսի 23ին Երեւանում իր աշխատանքը սկսեց Հայկական ԽՍՀ 11րդ գումարման ԳԽի 9րդ նստաշրջանը, որի օրակարգում էին ԼՂԻՄի[21] վերաբերեալ մինչ այդ ընդունուած որոշումների հարցը, երկրաշարժի հե-

---

[20] *Սովետական Հայաստան*, 11 Մայիսի 1989:

[21] Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի պատմական Արցախ նահանգի մի մասն է: 1904-13՝ ռուս-պարսկական պատերազմից յետոյ՝ Գիւլիստանի պայմանագրի համաձայն, մտաւ Ռուսական կայսրութեան կազմում: 1917ին Ռուսաստանը խորհրդայնացաւ: 1918 Մայիսի 26ից 28՝ Ռուսաստանից իրենց անկախութիւնը հռչակեցին Հայաստանը եւ Վրաստանը, թուրքական աջակցութեամբ ձեւաւորուեց նոր Ադրբեջանը: 1921 Յուլիսի 5ի Ռուսաստանի Կոմունիստական կուսակցութեան կենտկոմի կովկասեան բիւրոյի որոշմամբ Արցախը բռնակցուեց Ադրբեջանական ԽՍՀին՝ լայն իրաւասութիւններով ազգային ինքնավարութիւն կազմաւորելու պայմանով: 1923 Յուլիսի 7ին Արցախի մի հատուածի վրայ ստեղծուեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը:

տեւանքների վերացման ընթացքը, բնապահպանական խնդիրները եւ այլ հարցեր: Լեւոն Տէր Պետրոսեանը, Ռոբերտ Քոչարեանը, Ռաֆայէլ Ղազարեանը, Արկադի Մանուչարովը ընտրուեցին ՀԽՍՀ ԳԽի պատգամաւորներ:

1989 Սեպտեմբերի կէսերին սկսուեց ՀԽՍՀ ԳԽի արտահերթ նստաշրջանը, որում քննարկուեց հանրապետութեան ծանր վիճակը, եւ կառավարութիւնը (նախագահ Վլադիմիր Մարգարեանց) ներկայացրեց հանրապետութիւնը այդ վիճակից դուրս բերելու իր ծրագիրը: Նստաշրջանի աշխատանքին աշխուժօրէն մասնակցում էին ՀՀՇ անդամները:

1989 Նոյեմբերի 4ին Ստեփան Շահումեանի անուան պալատում տեղի ունեցաւ ՀՀՇ հիմնադիր համագումարը, որտեղ ելոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան (ՀԿԿ) առաջին քարտուղար Սուրէն Յարութիւնեանը[22]: Այս ամէնը նշանակում էր, որ իշխանութիւնը աստիճանաբար անցնում էր ՀՀՇի ձեռքը:

Ժողովրդական ճնշման արդիւնք էր նաեւ ԽՍՀՄ գերագոյն խորհրդի ընդունած որոշումը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրադրութիւնը նորմալացնելու միջոցառումների մասին» (1989 Նոյեմբերի 28): Այն, սակայն չարդարացրեց հայ ժողովրդի սպասելիքները. նախագծում չէին քննադատւում Ադրբեջանում կազմակերպուած հայկական ջարդերը, Հայաստանի շրջափակումը ադրբեջանցիների կողմից: Պատահական չէ, որ ԽՍՀՄ ԳԽի հայ պատգամաւորական կազմը իր յայտարարութեան մէջ այս որոշումը գնահատեց որպէս կենտրոնի «*կապիտուլիացիա Ադրբեջանի ժողովրդական ծայրայեղականների առջեւ*»[23]: Որոշումը բողոքի նոր ալիք բարձրացրեց Հայաստանում եւ 1989 Նոյեմբերի 30ին այն գնահատելու համար հրաւիրուեց ՀԽՍՀ ԳԽի արտահերթ նստաշրջան: Այն քննարկեց նաեւ շրջափակման, սահմանների անվտանգութեան, փախստականների հարցերը: 1989 Դեկտեմբերի 1ին ընդունուեց Հայկական ԽՍՀ գերագոյն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի որոշումը «Հայկական ԽՍՀի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին»:

Նստաշրջանը քննարկեց նաեւ ԼՂԻՄի առթիւ ԱՄՆի ծերակոյտի ընդունած բանաձեւը: Ընդհանրապէս ԱՄՆի ծերակոյտի բանաձեւը (ուր քննադատւում էին ԽՍՀՄ անարդարութիւնները Ղարաբաղի եւ Հայաստանի հանդէպ, Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը եւ հաւաստիացւում էր, որ ԱՄՆը կը շարունակի օգնութիւնը Հայաստանին) մէկն էր երկրաշարժից յետոյ արտասահմանեան երկրների կողմից ընդունուած 'հայանպաստ', իրականում՝ հակախորհրդային - որոշումների եւ գործողութիւնների շարքում:

---

[22] Սուրէն Յարութիւնեան.- հայ քաղաքական եւ կուսակցական գործիչ, Կարէն Դեմիրճեանից յետոյ նշանակուեց ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար (1988-90):

[23] *Սովետական Հայաստան*, 10 Դեկտեմբեր 1989:

1989 Օգոստոսի 7ից Սեպտեմբերի 1ը Ժնեւում կայացած ՄԱԿի մարդու իրաւունքների ենթայանձնաժողովը դիմեց ԽՍՀՄ կառավարութեանը Ղարաբաղում հանրաքուէ անցկացնելու առաջարկով, քննադատեց հայերի կոտորածները Ադրբեջանում, որոնց հետեւանքն էր առաջացած գաղթականների հիմնահարցը: Հայաստան էին այցելում միջազգային բարձրաստիճան պաշտօնատարներ (օր. ԱՄՆ արտակարգ եւ լիազօր դեսպանը ԽՍՀՄում՝ Ջ. Ֆ.Մետլոկը): Ամենայն հայոց կաթողիկոսի ԱՄՆ այցելութեան ժամանակ վեհափառին ընդունել էր ԱՄՆ նպախագահ Ջորջ Բուշը: Հետեւապէս, ԱՄՆ ծերակոյտի բանաձեւը այդքան էլ անսպասելի չէր, սակայն այն մեծ աղմուկ առաջացրեց ԽՍՀՄում: ԽՍՀՄ արտգործնախարարի առաջին տեղակալ Ա.Ա.Բեսմերտինը իր մօտ հրաւիրելով Մետլոկին բողոք էր յայտնել ԽՍՀՄ ներքին գործերին խառնուելու համար եւ նշել, որ դա «*առաջ բերեց խորհրդային մարդկանց ուժգին հակազդեցութիւնը եւ այդ վրդովմունքը չի կարելի չհասկանալ*»[24]: Ի պատասխան դրան ՀԽՍՀ ԳԽի նստաշրջանը այն գնահատեց իբրեւ «*ամերիկեան ժողովրդի մտահոգութեան արտայայտութիւն*», «*արդարացի պահանջի պաշտպանութիւն եւ ըմբռնում*»: Որոշում ընդունուեց նաեւ ԽՍՀՄ արտգործնախարարութեան յայտարարութեան վերաբերեալ, որտեղ պահանջուեց, որ հայ ժողովրդի անունից այլեւս յայտարարութիւններ չարուեն:

1990ի սկզբին միջազգային իրադրութիւնը տարածաշրջանում աւելի սրուեց: Տագնապ էին առաջացնում Նախիջեւանից եկող լուրերը, ուր խախտուել էր խորհրդահիրանական սահմանը: Ինքնապաշտպանութիւնը դարձել էր օրակարգի խնդիր: Դրութիւնը բարդանում էր նրանով, որ Ադրբեջանն անցաւ նախայարձակման Գետաշէնում, մարտեր էին տեղի ունենում Խանլարում եւ Շահումեանում: Բաքւում հայերի ջարդեր սկսուեցին: Ադրբեջանում հնչում էին անկախութեան կոչեր: Եթէ մինչ այդ ադրբեջանցիները հայերի վրայ յարձակւում էին միայն իրենց տարածքում, ապա սկսեցին յարձակումներ գործել նաեւ ՀԽՍՀ սահմանների վրայ՝ Երասխաւանի, Վայքի, Մեղրու, Գորիսի, Կապանի, Նոյեմբերեանի, Տաւուշի, Իջեւանի, Վարդենիսի եւն.[25]: Ընդ որում դա կատարւում էր յատուկ դրութեան պայմաններում: Կորցնելով ԽՍՀՄ կենտրոնական իշխանութիւններից պաշտպանուելու յոյսը, հայերը սկսեցին զինուել: Յարձակումներ եղան ներքին գործերի բաժինների եւ զինուորական ստորաբաժանումների վրայ՝ զէնք ձեռք բերելու նպատակով: Ստեղծուեցին աշխարհազօրային խմբեր, որոնց շնորհիւ թշնամին սկսեց հակահարուած ստանալ:

ՀԽՍՀ ԳԽի Փետրուարի նիստում նախագահութեան նախագահի տեղակալ ընտրուեց Ռաֆայէլ Ղազարեանը: Նախագահութեան կազմում

---

[24] *Սովետական Հայաստան*, 22 Նոյեմբեր 1989:

[25] *Հայոց պատմութիւն, հատոր IV, գիրք երկրորդ*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2016, էջ 203:

ընտրուեցին Հրաչիկ Սիմոնեանը, Տէր Պետրոսեանը, Քոչարեանը: Անվաւեր ճանաչուեց Ղարաբաղն Ադրբեջանին միացնելու մասին ՌԿ(բ)Կ[26] կենտկոմի կովկասեան բիւրոյի 1921 Յուլիսի 5ի որոշումը:

1990 Փետրուարի կէսին ԽՍՀՄ ԳԽում յայտարարուեց, որ ղարաբաղեան հարցի լուծումը թողնում է 2 հանրապետութիւններին, սակայն միաժամանակ Խանլարի շրջանի Ազատ, Կամօ, Մարտունաշէն եւ Գետաշէն հայաբնակ գիւղերից, այստեղ տեղաբաշխուած խորհրդային բանակի ղեկավարութեան թոյլտուութեամբ, սկսուեց տեղահանուել հայ բնակչութիւնը (մինչդեռ այս գիւղերը ինքնապաշտպանութեան շնորհիւ դիմացել էին 1988 Նոյեմբերի եւ 1990 Յունուարի ադրբեջանական յարձակումներին)[27]: Այդ ամէնի հետեւանքով Հայաստանում ուժեղացան հակախորհրդային տրամադրութիւնները: Նախագահական լայն լիազօրութիւններ ստանալուց յետոյ էլ Գորբաչովը չկարողացաւ կարգաւորել խորհրդային երկրի ներքին հիմնախնդիրները: Մարտի վերջում իրադրութիւնը խիստ սրուեց նաեւ Հայաստանի սահմանամերձ գօտում (Արարատ, Գորիս, Վայք, Եղեգնաձոր, Իջեւան, Նոյեմբերեան, Շամշադին):

1990ի սկզբում հաւանականութիւնը՝ որ Հայաստանը կ'ընթանայ անկախացման ուղիով, աճեց: Դրան նպաստեցին հետեւեալ հանգամանքները.-

- ✓ ներքին անպահովութեան զգացումը, որը ծնուեց Սումգայիթի եւ Ադրբեջանի այլ վայրերում տեղի ունեցած ջարդերից եւ դրանց անպատժելիութիւնից, սահմանամերձ գօտու հայ-ադրբեջանական բախումներից.
- ✓ արտաքին ապահովութեան որոշ խախտումները (օրինակ խորհրդահիրանական սահմանի խախտումը).
- ✓ ընկերա-տնտեսական դժուարութիւնները, որոնք անընդհատ կրկնուող շրջափակումների արդիւնք էին.
- ✓ երկրաշարժի գօտում վերականգնողական աշխատանքի անհետեւողականութիւնը, դանդաղկոտութիւնը.
- ✓ ընկերվարութեան հակադրուող միջազգային ուժերի քաղաքականութիւնը, որոնք ազգային հարցի շահարկումները դիտում էին ԽՍՀՄի թուլացման միջոց.
- ✓ սփիւռքահայութեանը Հայաստանի շուրջը համախմբելու եւ նրա միջոցների ու հնարաւորութիւնների օգտագործման յոյսը.
- ✓ դժգոհութիւնը ընկերային անարդարութիւններից, կաշառակերութիւնից, ընկերվարական արժէքների արժէզրկումը:

Այսպիսով, արցախեան շարժման արդիւնքում անկախութեան գաղափարը ընդունուեց հասարակութեան կողմից, բայց որպէսզի այն դառնար իրականանալի նպատակ, այն պէտք է մտնէր օրէնսդիր մարմին:

---

[26] Ռուսաստանի Կոմունիստական (բոլշեւիկների) կուսակցութիւն:

[27] Աւելի մանրամասն տե՛ս՝ *Հայոց պատմութիւն, հատոր IV, գիրք երկրորդ*, էջ 221:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ.- ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Անկախութեան հայտը օրինագիծ դարձնելն ու դրա ընդունումը իրագործեց ՀԽՍՀ 12րդ գումարման գերագոյն խորհուրդը, որը կազմաւորուեց 2 փուլով՝ 1990 Մայիս 20ին եւ Յունիսի 3ին ընթացած ժողովրդական պատգամաւորների ընտրութիւնների միջոցով: Գերագոյն խորհրդի ընտրութիւնների արդիւնքում ընդդիմադիր ՀՀՇն ստացաւ քուէների 45%[28] (ՀՀՇից ընտրուեցին Վազգէն Մանուկեանը, Սիրադեղեանը, Տէր Պետրոսեանը, Բաբկէն Արարքցեանը, Ռ. Ղազարեանը, Թելման Գդլեանը, Արկադի Մանուչարովը եւ ուրիշներ), 1 հոգի Ազգային Ինքնորոշման Միաւորումից (ԱԻՄ)[29] էր, մնացածը ՀԿԿ անդամներ էին: ՀԿԿ ընդդիմադիր մասը հիմնականում ներկայացուած էր երկու հիմնական ուժերով՝ ազգային-ազատագրական շարժման գաղափարախօսութեան հետեւորդներ եւ ազատական բարեփոխումների կողմնակիցներ: Այդ գերագոյն խորհրդի տարբերիչ գիծն էր նաեւ Արցախից պատգամաւորների ընտրութիւնն ու մասնակցութիւնը:

ՀԽՍՀ գերագոյն խորհուրդն աշխատանքի սկզբում հաստատեց այն օրակարգը, որով պէտք է աշխատէր առաջիկայ շրջանում եւ, ըստ էութեան, դա անկախութեան օրակարգն էր: Օրէնսդրական փաթեթը նախատեսում էր անկախացող հանրապետութեան օրէնսդիր, գործադիր իշխանութիւնների եւ իրաւական համակարգի փոփոխում, տարածքային եւ տեղական կառավարման համակարգերի վերափոխում, սեփականութեան ձեւերի բազմազանացում, խօսքի եւ խղճի ազատութիւն: Ժողովրդավարական բարեփոխումներ էին նախատեսւում հասարակական-քաղաքական համակարգում: Անկախութեան հասնելու համար, ՀՀՇ առաջնորդների մի մասը որոշել էր առժամանակ ետ կանգնել Հայաստանի եւ Արցախի վերամիաւորման մասին ՀԽՍՀ ԳԽ 1989 Դեկտեմբերի 1ի որոշումից: Դրա փոխարէն նախատեսւում էր յատուկ փաթեթի ընդունում Արցախի ընկերա-տնտեսական զարգացման վերաբերեալ: ՀՀՇ գաղափարախօսների մօտեցումը հետեւեալն էր՝ միայն անկախ հզօր Հայաստանը կարող է լուծել իր բռնազաւթուած հողերի հարցը: Այդ ժամանակ դեռ յոյս կար, որ հայ-ադրբեջանական տեղային բախումները ԽՍՀՄի պայմաններում չեն վերաճի պատերազմի:

ՀԽՍՀ ԳԽ նախագահի ընտրութիւնն ըստ էութեան վերածուեց Հայաստանի ուղու ընտրութեան՝ Հայաստանի գերիշխանութեան «նորացում»

---

[28] Լեւոն Տեր Պետրոսեան, *Ընտրանի (ելոյթներ, յօդուածներ, հարցազրոյցներ),* «Անտարէս» հրատ. Երեւան, 2006, էջ 371:

[29] ԱԻՄից հեռակայ կարգով պատգամաւոր էր ընտրուել Հայրիկեանը: Դա Մոսկուային նետուած մարտահրաւէրներից էր, քանի որ այդ պահին Հայրիկեանը աքսորուած էր ԽՍՀՄից:

ԽՍՀՄ կազմում (իր ծրագրում ներկայացրեց Վլադիմիր Մովսիսեանը) եւ Հայաստանի անկախացում ԽՍՀՄից (Տէր Պետրոսեան): Թէեւ Տէր Պետրոսեանի ելոյթում անկախութեան հայտ ներկայացուեց, սակայն պարզ էր, որ օրէնսդիր մարմին մտած նոր ուժերը դեռեւս չունեն անկախութեան հասնելու յստակ ծրագիր: Դրա մասին նա պարզորոշ խօսեց իր ելոյթում, ասելով. «*Իսկ թէ ինչպիսի հանգրուաններով կ'իրականացուի ազգային անկախ պետականութեան վերականգնումը, դա արդէն կախուած է ոչ թէ առանձին անհատների քմահաճոյքից կամ կուսակցութիւնների թելադրանքից, այլ կոնկրէտ քաղաքական իրավիճակներում ժողովրդի կամքն արտայայտող ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի դիրքորոշումից, անհրաժեշտութեան դէպքում նաեւ հանրաքուէի միջոցով կայացած համաժողովրդական վճռից*»[30]:

Անկախացման ծրագիրը կազմում էր աստիճանաբար: Վարչապետ նշանակուելուց առաջ Վազգէն Մանուկեանը ՀԽՍՀ ԳԽում ներկայացրել էր Հայաստանի զարգացման վերաբերեալ տեսլականը: Նախատեսւում էր աստիճանաբար ԽՍՀՄ կենտրոնական իշխանութիւնների հետ կապերը փոխարինել բազմաթիւ նոր տնտեսական կապերով, պլանային տնտեսութիւնը փոխարինել շուկայական գործիքակազմերով կարգաւորուող տնտեսութեամբ, միաժամանակ պահելով ապագայ չունեցող ընկերվարական տնտեսութիւնը՝ «*նպատակ ունենալով զերծ մնալ մեծ գործազրկութիւնից եւ տնտեսութեան համար ինչ որ ժամանակ ստանալ անհրաժեշտ հումք*»[31]: Կարեւոր համարուեց ֆինանսական նոր աղբիւրների հայթայթումը եւ Մոսկուայից կախուածութեան փոքրացումը:

Մանուկեանը նկարագրեց սպասուող գործընթացները.-

1. ընկերվարական տնտեսութեան քայքայում, որպէս առարկայական գործընթաց եւ դրա հետեւանքով Հայաստանը չի ստանայ այլ հանրապետութիւններից ներկրուող մթերք, վառելանիւթ եւ հումք.
2. պետական սեփականութիւնից արագ անցում մասնաւոր սեփականութեան.
3. զինուած միաւորների առողջ մասի ծառայեցում ժողովրդի շահերին, պայքար բանդիտիզմի դէմ.
4. ամբողջ հայութեան համախմբում պետութեան հզօրացման շուրջ:

Դրութիւնը բարդանում էր նաեւ նրանով, որ իշխանական նախորդ լծակների թուլացման պայմաններում երկրում պետական գոյքի թալան էր սկսուել: Ընդ որում դա արւում էր թէ՛ պետմարմինների մակարդակով, թէ՛ ձեռնարկութիւնների եւ գործարանների, թէ՛ թալանով ապրող զինուած ջոկատների մակարդակով: Կարգուկանոնի հաստատումը խիստ անհրաժեշտ էր: Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր դեռ: Թոյլ չտալու համար Մոսկ-

---

[30] Տեր Պետրոսեան, *Ընտրանի*, էջ 66:
[31] ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ. 58, էջ 12:

ուայի միջամտութիւնը՝ Հայաստանի գործերին, կառավարութիւնը պէտք է կարողանար ամէն ինչ հաւաքէր իր ձեռքին: Դա վերաբերւում էր նաեւ զինուած կազմաւորումներին: Խնդիր էր դրուած՝ դրանք տեղաւորել ԽՍՀՄ օրէնսդրութեամբ նախատեսուած կառուցոյցներում: Տէր Պետրոսեանը նախանշեց դրանք[32].-

- ✓ Ներքին գործերի նախարարութիւն,
- ✓ Պետական անվտանգութեան կոմիտէ,
- ✓ Քաղաքացիական պաշտպանութեան համակարգ,
- ✓ ԴՕՍԱԱՖ[33]
- ✓ Խորհրդային բանակ:

Գերագոյն խորհրդի նախագահ ընտրուելուց յետոյ, 1990 Օգոստոսի 7ին, Տէր Պետրոսեանը շնորհաւորեց «*...ամբողջ հայ ժողովրդին ի Հայաստան աշխարհ եւ ի սփիւռս աշխարհի...Հայոց անկախ պետականութեան հիմնարկէքի առիթով, կիսելով ձեր տօնական ցնծութիւնը եւ սեփական ուժերի նկատմամբ վերագտած վստահութիւնը, որ միակ յոյսն է գալիք յաջողութիւնների: Դրա հետ մէկտեղ կոչ եմ անում սառնասրտօրէն գնահատել մեր հանրապետութեան ներկայ ճգնաժամային իրավիճակը, որից դուրս գալու միակ գրաւականը ժողովրդի համախմբումն է պետականութեան գաղափարի եւ նրա մարմնաւորումը հանդիսացող ազգային խորհրդարանի շուրջ*»[34]: Յաջորդ քայլը պէտք է լինէր Անկախութեան հռչակագրի ընդունումը:

Անկախութեան հռչակագրի ընդունման ընթացակարգը նոյնպէս նորամուծութիւն էր: Հռչակագրի բնագիրը մշակող յանձնաժողովի անդամները մշակել էին հիմնական բնագիրը, որը դրուեց ԳԽ քննարկման: Յանձնաժողովի անդամները հրաւիրուեցին դահլիճի բեմահարթակ: Դահլիճում ընթանում էր մտքերի փոխանակում, քննարկում: Յանձնաժողովի անդամները պէտք է գրանցէին առաջարկութիւններն ու դիտողութիւնները, հարկ եղած դէպքում միջամտէին քննարկմանը: Քննարկմանը մասնակցում էին Հայաստանից ընտրուած ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորները, որոնք ունէին հարցերը քննարկելու նոյնքան իրաւունք, որքան Հայաստանի ԳԽ ժողովրդական պատգամաւորները, սակայն չունէին քուէարկելու իրա-

---

[32] ՀԱԱ, ֆ.207, գ. 62, գ. 60, էջ 20:

[33] Ռուսերէն ДОСААФ՝ Добровольное общество содействия армии, авиации и флоту (բանակին, օդագնացութեանը, նաւատորմին աջակցութեան կամաւոր հասարակութիւն).- ԽՍՀՄում գործող պաշտպանական-մարզական կազմակերպութիւն, որի նպատակն էր աջակցել ԽՍՀՄ պաշտպանունակութեան ամրապնդմանը եւ աշխատաւորների նախապատրաստմանը սոցիալիստական հայրենիքի պաշտպանութեանը: *Հայաստանում այն միաւորում էր գործարաններում, ձեռնարկութիւններում, կոլտնտեսութիւններում գործող աւելի քան 4700 սկզբնական կազմակերպութիւններ:*

[34] ՀԱԱ, ֆ.207, գ.62, գ.54, էջ 2:

տունք: Բանավէճ էր ծաւալւում հռչակագրի գրեթէ բոլոր յօդուածների շուրջ: Քննարկման ընթացքում յաճախ էին լինում անիրատեսական, երբեմն միամիտ, երկչոտութեամբ տոգորուած առաջարկութիւններ: Բայց բանավէճի արդիւնքում քաղաքական իրատեսական մօտեցումն էր գերիշխող դառնում:

Բանավէճ ծաւալուեց անուանման շուրջ՝ Հայկական Հանրապետութիւ՞ն (Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան համանմանութեամբ) թէ՞ Հայաստանի Հանրապետութիւն: Սէյրան Բաղդասարեանը[35] առաջարկեց անուանել Արեւելեան Հայաստանի Հանրապետութիւն, յետագայում տեղ թողնելով Թուրքիայից հայկական հողերի պահանջատիրութեան համար[36]: Նրա կարծիքով, դա նպաստելու էր *դէ ֆակտո* Արեւմտեան Հայաստանի ճանաչմանը, բացի դրանից Արեւելեան Հայաստանի համար հայտ էր ներկայացուելու Նախիջեւանի ինքնավար մարզի նկատմամբ: Սակայն առաջարկը չընդունուեց:

Հռչակագրի որոշ տարբերակներում նշւում էր, որ ՀՀ տարածքը կազմում է ՀԽՍՀ եւ ԼՂԻՄի տարածքը: Բաղդասարեանը առաջարկեց չօգտագործել «Արցախ» անուանումը, որպէս ոչ-իրաւաբանական հասկացութիւն: Օգտագործել «Ղարաբաղ» եզրոյթը, որը աւելի հանրաճանաչ էր միջազգային հանրութեան համար:

Փաստաթղթի մի տարբերակում գրուած էր. «*Հայաստանի Հանրապետութեան անվտանգութիւնը եւ նրա սահմանների անձեռնմխելիութիւնը ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետութիւնը ստեղծում է գերագոյն խորհրդին ենթակայ սեփական զինուած ուժեր, ներքին զօրքեր, պետական եւ հասարակական անվտանգութեան մարմիններ*»[37]: Մինչդեռ դրանք պէտք է լինէին կառավարութեան ենթակայութեան տակ:

Խորհրդարանում քննարկման ներկայացուած անկախութեան հռչակագրի 5 նախագծերը մաղուեցին: Սուր պայքար ծաւալուեց ոչ միայն հռչակագրի բովանդակութեան, այլ նաեւ անուան շուրջ:

Պատգամաւոր Դաւիթ Վարդանեանը[38], յստակութիւն մտցնելու նպատակով, առաջարկեց պատասխանել հետեւեալ հարցադրումներին.-

ա) Ի՞նչ փաստաթուղթ է հռչակագիրը: Ինչի՞ համար է այն ընդունւում: Ի՞նչը պէտք է հաստատուի այդ փաստաթղթով: Բանն այն է, որ հռչակագրերի նախագծերում կար էականօրէն տարբեր 2 մօտեցում.- ա) որ 1918-20ին եղել է Հայաստանի անկախ հանրապետութիւն եւ հռչակւում է դրա

---

[35] ՀՀ ԳԽ պատգամաւոր, ԳԽ նախագահութեան, ՀՅԴ պատգամաւորական խմբակցութեան անդամ, ՀՀ ԳԽ Արցախի հարցերի յատուկ յանձնաժողովի նախագահ:

[36] ՀԱԱ, ֆ.207, գ.62, գ.54, էջ 9:

[37] ՀԱԱ, ֆ.207, գ.62, գ.54, էջ 6:

[38] ՂԿ անդամ, ՀԽՍՀ ԳԽ պատգամաւոր, «Ազգային ժողովրդավարներ» պատգամաւորական խմբի անդամ:

վերականգնումը եւ բ) որ ազգերի ինքնորոշման իրաւունքի հիման վրայ Հայաստանը հռչակում է անկախ հանրապետութիւն ԽՍՀՄից: Այսինքն, առաջարկում էր կողմնորոշուել՝ «*վերականգնե՞լ անկախութիւնը թէ՞ հաստատել անկախութիւնը*»[39]:

բ) Ինչպէ՞ս հռչակել անկախութիւնը: Այս հարցում եւս կային տարբեր մօտեցումներ՝

1. Հայաստանը հռչակել անկախ եւ սկսել բանակցութիւններ վարել ԽՍՀՄ ղեկավարութեան հետ: Այս տարբերակը աւելի կտրուկ քայլեր էր պահանջում անել:

2. Հայաստանը կիսանկախ պետութիւն է, բայց հռչակում է ինքնիշխանութիւնն ընդլայնելու գործընթացի սկիզբը մինչեւ կատարեալ անկախութիւն:

3. *Հայաստանը հռչակում է կիսանկախ, ինքնիշխան պետութիւն, որը նպատակ ունի անկախութեան հասնելու: Նպաստաւորող քաղաքական իրավիճակի դէպքում այն կարող է անկախ հռչակուել*[40]*:*

Այս վերջին երկու տարբերակներից վերջինը առաւել զգուշաւոր էր:

Պատգամաւորների բանավէճի առարկայ դարձան նաեւ հետեւեալ հարցերը.-

- ✓ հռչակագրում արտացոլե՞լ Հայ Դատը թէ՞ ոչ, դրան էր առնչւում նաեւ վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ,
- ✓ միանգամից անկախանա՞լ, թէ՞ փուլ առ փուլ, պատրաստելով տնտեսական համակարգը անկախութեան,
- ✓ անկախանալ հռչակագրո՞վ, թէ՞ հանրաքուէով,
- ✓ արտայայտե՞լ դրանում վերաբերմունքը նորացուող միութենական պայմանագրի նկատմամբ թէ՞ ոչ:

ԽՍՀՄի կազմից դուրս գալը դեռեւս վտանգներ էր պարունակում եւ յղի էր անկանխատեսելի հետեւանքներով: Հասարակութեան մէջ որոշակի վախեր կային, որոնք բաձրաձայնեց Վարդգէս Պետրոսեանը[41]՝ «*...եթէ մենք ուզում ենք անկախ մեռնել, ապա կարելի է վաղը անկախութիւն յայտարարել եւ մեռնել անկախ: Բայց մենք ուզում ենք անկախ ապրել եւ պէտք է մեր քայլերն ուղղուեն դրան*»[42]:

Շատերը տեսանելի հեռանկարում Հայաստանի գերիշխանութիւնը տեսնում էին ԽՍՀՄ վերանորոգուած համադաշնութիւնում: Հաշուի էր առնւում նաեւ Թուրքիայից եկող վտանգը, Ղարաբաղի կորստի ռիսկը: Տէր Պետրոսեանը շատ յստակ ներկայացրեց նպատակը. «*ամենայն հայոց հայրենիքը*» դարձնել «*ամենայն հայոց պետութիւն*»:

---

[39] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.54, էջ 13:

[40] Նոյն:

[41] Հայ յայտնի արձակագիր, թատերգակ, հրապարակախօս, հասարակական գործիչ, ԽՍՀՄ եւ Հայաստանի գրողների միութեան անդամ:

[42] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.55, էջ 8:

1990 Օգոստոսի 15ին Անկախութեան հռչակագրի բնագիրը պատրաստ էր: 1990 Օգոստոսի 22ին գերագոյն խորհրդում առանց քննարկման քուէարկութեան դրուեցին հռչակագրի վիճելի յօդուածների տարբերակները:

1990 Օգոստոսի 23ին ընդունուեց Հայաստանի անկախութեան հռչակագիրը[43]: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը վերանուանուեց Հայաստանի Հանրապետութիւն: Չնայած հռչակագիրն ընդունուել էր, բայց այն յղկելու եւ ոճաւորելու կարիք ունէր: Յանձնաժողովին մէկ օր էլ դրա համար յատկացուեց: Վերջապէս հռչակագրի բնագրի խմբագրումը աւարտուած էր եւ, ինչպէս Տէր Պետրոսեանը դիմելով դահլիճին ասեց. «*...այսօր էլ մենք ունենք այդպիսի մի հնարաւորութիւն հռչակագիրը խնդրելու ...ընթերցել մի խորհրդանիշի, որի անունն է Արամ Մանուկեան[44], պատգամաւոր: Պատգամաւոր Արամ Մանուկեան, Կիրովականից*»[45]: Արամ Մանուկեանը յուզիչ ելոյթից յետոյ ընթերցեց հռչակագիրը[46], այնուհետեւ այն դրուեց քուէարկութեան: Քուէարկութեանը մասնակցած 196 պատգամաւորից 194ը կողմ էր քուէարկել, 2ը՝ ձեռնպահ[47]:

Նախատեսուեց, որ յաջորդ օրը՝ ժամը 10ին, եռագոյնի տեղադրման արարողութիւնը հանդիսութեամբ տեղի ունենայ գերագոյն խորհրդի նախագահութեան շէնքի առջեւ, 10:30ին՝ ՀՀ կառավարութեան շէնքի:

Նոյն օրը օրէնք ընդունուեց «Հայկական ԽՍՀի վերանուանման մասին», որի համաձայն հիմնուելով «Հայաստանի անկախութեան մասին» հռչակագրի Ա. յօդուածի վրայ, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան գերագոյն խորհուրդը որոշեց.-

1. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը վերանուանել Հայաստանի Հանրապետութիւն, կրճատ՝ Հայաստան:
2. Ներկայիս գումարման գերագոյն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետութեան առաջին գումարման գերագոյն խորհուրդ:
3. Սոյն օրէնքը կիրարկել ընդունման պահից[48]:

---

[43] Նոյն :

[44] Տէր Պետրոսեանն ակնարկում էր Հայաստանի առաջին հանրապետութեան պետական գործիչ Արամ Մանուկեանի եւ ՀՀ ԳԽ երիտասարդ պատգամաւոր Արամ Մանուկեանի անունների նոյնութիւնը:

[45] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.65, էջ 27:

[46] Յետագայում, յիշելով այդ օրը Արամ Մանուկեանը նշում է որ նախօրօք պատրաստուել էր, գիտէր որ ելոյթ է ունենալու (Գերագոյն խորհուրդ 1990-1995. Արամ Մանուկեանի հուշերը (evnmag.com) :

[47] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.65, էջ 30:

[48] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.15, էջ 157:

Անկախութեան հռչակման պահին որեւէ մէկը չէր կարող կանխագուշակել, որ ԽՍՀՄը կը փլուզուի այդքան շուտ եւ այդ պատճառով նախատեսւում էր ԽՍՀՄից դուրս գալ խորհրդային օրէնսդրութեան համաձայն, հինգ տարուայ ընթացքում[49]:

Անկախութեան հռչակագրի ընդունումից յետոյ սկսեցին փոփոխուել Խորհրդային Հայաստանի որոշ օրէնքներ, յարմարեցնելով դրանք անկախացող հանրապետութեան կարիքներին, ընդունուել նորերը: Ընդհանուր առմամբ ՀՀ գերագոյն խորհուրդն ընդունեց 185 նոր օրէնք եւ 1169 որոշում[50]:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ.- ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՔՈՒԷԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՒ ՕՐԷՆՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԳԽՈՒՄ

Եթէ ՀԽՍՀ ԳԽ առաջին նստաշրջանում ամենակարեւորը Անկախութեան հռչակագիրն էր, ապա երկրորդում՝ անկախութեան հանրաքուէի նա-

---

[49] Խորհրդային հանրապետութեան ԽՍՀՄից դուրս գալը նախատեսուած էր ԽՍՀՄ սահմանադրութեամբ, սակայն անկախացման գործընթացի գործիքակազմեր չկային: Միայն 1990 Ապրիլի 3ին ընդունուեց ԽՍՀՄ օրէնքը «Միութենական հանրապետութեան ԽՍՀՄից անջատուելու հետ կապուած հարցերի լուծման կարգի մասին», որով նախատեսուեցին հանրաքուէի գործիքակազմը եւ անցումային շրջանի 5 տարիները: http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=ESU;n=6#0RfR9pSbdd4VDKHB :

[50] http://www.parliament.am/parliament.php?id=parliament :

խապատրաստելը: Միեւնոյն ժամանակ ընթանում էր նաեւ անկախացող հանրապետութեան քաղաքական համակարգի փոխակերպումը:

Գերագոյն խորհրդում ստեղծում էին նաեւ բազմակուսակցական համակարգի իրաւական հիմքերը: 1991 Ապրիլի 2ին ընդունուեց հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների մասին օրէնքի կիրարկման կարգը, ինչի կապակցութեամբ Արարքցեանը[51] շնորհաւորելով բոլորին նշեց. «*...փաստօրէն առաջին անգամ, մեր հանրապետութիւնում, յամենայն դէպս վերջին 70 տարուայ ընթացքում ստեղծուեց բազմակուսակցական համակարգ*»[52]: Ընդունուեցին խղճի ազատութեան եւ կրօնական ազատութիւնների մասին օրէնքները: Սկսեցին փոփոխուել Հայաստանի տօները եւ յիշատակի օրերը:

1991 Մարտի 1ին ՀՀ գերագոյն խորհուրդը որոշում կայացրեց 1991 Սեպտեմբերի 21ին անկախութեան հանրաքուէ անցկացնել: Գիտակցելով հանրաքուէի եւ հանրապետութեան նախագահի ընտրութեան ընթացքում ժողովրդավարութեան եւ մարդկանց կամքի ազատ արտայայտման համար պայմանների ապահովման կարեւորութիւնը, ԳԽն որոշեց 1991 Օգոստոսի 16ից հանրապետութեան ողջ տարածքում վերացնել արտակարգ դրութիւնը եւ պարետային ժամը՝ մտցուած ԳԽ 1990 Օգոստոսի 29ի որոշմամբ:

Հանրաքուէի պրոպագանդման ուղղութեամբ իրականացուելիք միջոցառումների ծրագիրը մշակող յանձնախումբ կազմուեց՝ Խոսրով Յարութիւնեանի գլխաւորութեամբ: ԳԽն Հայաստանի ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերեալ հանրաքուէի նախապատրաստման եւ անցկացման մասին ֆիլմ պատուիրուեց, հաստատուեց հանրաքուէի խորհրդանիշը[53]:

1991 Մարտի 17ին ԽՍՀՄ մեծ մասում հանրաքուէ էր անկացուել եւ բնակչութեան մեծ մասը, յատկապէս Ռուսաստանը, քուէարկել էր ամբողջատիրութիւնը պահելու օգտին: ԽՍՀՄ դեմոկրատական շարժումը ժամանակաւորապէս անկում էր ապրել: Այդ պայմաններում աշխուժացել էին հակաժողովրդավարական ուժերը: 1991 Ապրիլին խորհրդաադրբեջանական ուժերը յարձակուեցին Գետաշէնի, Շահումեանի, Արցախի վրայ, տեղահանելով հայ բնակչութեանը:

1991 Մայիսի 23ի նիստին քննարկուեց ՀՀ նախագահի պաշտօն ստեղծելու հարցը երկրի կառավարման արդիւնաւէտութիւնը բարձրացնելու տեսանկիւնից: Քննարկուեցին կառավարութեան կառուցուածքային փոփոխութիւնների եւ նոր նախարարութիւնների ստեղծման հարցերը: Այսինքն հանրապետութիւնը այլեւս չէր պատրաստում պահել կառավարման այն մոդէլը, որ առկայ էր. այն պէտք է փոփոխուէր անկախացող հանրապետութեան կարիքներին համապատասխան:

---

[51] ՀՀ գերագոյն խորհրդի նախագահի առաջին տեղակալ:

[52] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.99, էջ 15:

[53] Հեղինակներ՝ Ռ. Արուտչեան, Կ. Փաշայեան (ՀԱԱ, ֆ. 207, ց.62, գ.4, էջ 105):

Վարչապետ Մանուկեանը գերագոյն խորհրդի քննարկմանը դրեց Հայաստանի զարգացման իր տեսլականը, որտեղ առանձնայատուկ տեղ ունէր անկախացման հանրաքուէի անցկացումը: Գերագոյն խորհուրդը պէտք է դնէր տնտեսական անկախութեան հիմքերը, արտաքին կապեր հաստատէր այլ պետութիւնների հետ եւ վարչապետի կարծիքով անհրաժեշտ էր արագացնել անկախութեան հանրաքուէի անցկացումը, որից յետոյ պէտք է պայմանագիր կնքուէր Մոսկուայի հետ, որը կ'արտացոլէր անցման ժամանակահատուածի համար մշակուելիք ծրագրի կարեւոր դրոյթները: Հանրաքուէի շուտափոյթ անցկացմանը կողմ էին նաեւ ԱԻՄը եւ Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը[54]: Սակայն ՀՀՇ ղեկավարութիւնում այդ հարցում միասնութիւն չկար: Մտավախութիւն կար, որ ժողովրդի մեծամասնութիւնը կարող է չքուէարկել անկախութեան օգտին[55], առաւել եւս, որ հասարակական կեանքի շատ բնագաւառներ կաթուածահար էին եղել, կենցաղային դժուարութիւնները շատացել էին: Մեծ դժուարութեամբ հանրապետութիւն բերուած սննդամթերքը չէր բաւականացնում: Շատ ոլորտներում քաոսային իրավիճակ էր տիրում[56]: Բարդութիւններ կային Մոսկուայի հետ յարաբերութիւններում. խորհրդային երկրի ղեկավարութիւնը փորձում էր տնտեսական լծակներով խեղճացնել անկախացող հանրապետութիւններին: Օրակարգի հարց էր Մոսկուայի հետ տնտեսական յարաբերութիւնների բնականոնացումը եւ Հայաստանի բնակչութեան համար քիչ թէ շատ տանելի վիճակի ապահովումը: Այդ հարցում վարչապետին բաւականին օգնում էին կառավարութեան կազմում մնացած հին կադրերը, որոնք կապեր ունէին միութենական տարբեր գերատեսչութիւնների հետ:

Անկախութեան հանրաքուէի մասին օրէնքի լրամշակման ուղղութեամբ մեծ աշխատանք իրականացրեց անկախ պետականութեան հաստատման եւ ազգային քաղաքականութեան հարցերի յանձնաժողովը, որի նախագահն էր Էդուարդ Եգորեանը:

ԳԽն որոշումներ ընդունեց ՀՀ հանրաքուէի կենտրոնական յանձնաժողովի կազմի վերաբերեալ եւ ՀՀ հանրաքուէի մասին օրէնքը կիրարկելու մասին: Հանրաքուէն նախապատրաստող յանձնաժողովի կազմը 17ից դարձաւ 25: Յանձնաժողովում փորձեցին ընդգրկել ներկայացուցիչներ բո-

---

[54] *Հայք*, N2 (52), 16 Յունուարի 1991:

[55] Այդ մտավախութիւնը արտայայտեց հարցազրոյցներից մէկում Սիրադեղեանը, նշելով. «*…պանթուրքիզմի սարսափով ներծծուած ժողովրդով, ո՞ր գլխից ձեռ քաշածը հանրաքուէի կը գնայ: Իսկ եթէ պարտուե՞նք*» (*Հայք*, 20 Մարտ 1990):

[56] Տե՛ս՝ վարչապետ Վազգէն Մանուկեանի ելոյթը ՀՀ ԳԽում 1990 Նոյեմբերի 30ին (Վազգէն Մանուկեան, *Հայկական երազանքը գոյատեւման փակուղում*, «Վ.Ի.Վ. Այսօր եւ Վաղը» հրատ., Երեւան, 2002, էջ 113):

լոր հասարակական-քաղաքական կազմակերպութիւններից: Ընդգրկուեցին գիտութեան, մշակոյթի ներկայացուցիչներ[57]:

Անկախութեան հանրաքուէի մասնակցութիւնը աննախադէպ բարձր էր՝ մասնակցեց քուէարկութեան իրաւունք ունեցող քաղաքացիների 95,05%ը: Նրանցից 94,39%ը քուէարկեց անկախութեան օգտին: 1991 Սեպտեմբերի 23ին հանրաքուէի արդիւնքների հիման վրայ ՀՀ գերագոյն խորհուրդը Հայաստանի Հանրապետութիւնը հռչակեց անկախ պետութիւն: Ընդամէնը 3 տարի առաջ դրանից խուսափող ժողովուրդը միասնական հանդէս եկաւ անկախութեան հայտով:

1991 Օգոստոսին ԽՍՀՄում կազմակերպուած պետական հարուածը[58] արագացրեց խորհրդային երկրի անկումը, սակայն որեւէ մէկը չէր կարող կանխագուշակել՝ երբ ԽՍՀՄը կը դադարի գոյութիւն ունենալ, այդ պատճառով ՀՀ ԳԽ նախագուհութիւնը որոշեց ստեղծել «ԽՍՀՄից դուրս գալու հարցով բանակցութիւնների կոնցեպցիան մշակող եւ դրանց համակարգը նախապատրաստող յանձնախումբ» հետեւեալ կազմով.- Արարքցեան, ՀՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալ,
Եգորեան, ՀՀ ԳԽ անխախ պետականութեան եւ ազգային քաղաքականութեան հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ,
Դ. Վարդանեան, ՀՀ ԳԽ արտաքին յարաբերութիւնների հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ,
Բ. Ասատրեան, ՀՀ ԳԽ առողջապահութեան եւ ընկերային հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ,
Տ. Սարգսեան, ՀՀ ԳԽ ֆինանսավարկային եւ բիւջէտային հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ[59]:

Ի լրումն դրան կազմուեց նաեւ ԽՍՀՄ կազմից ՀՀ դուրս գալու կապակցութեամբ բանակցութիւնների նախապատրաստման յանձնախումբ[60], որը դադարեց գործել 1991 Դեկտեմբերին ԽՍՀՄ վերացման պատճառով:

ՀՀ ԳԽ նախագահութիւնը յայտարարութիւն ընդունեց, որում նշեց, որ յեղաշրջումը կանխելուց յետոյ ԽՍՀՄում ստեղծուել է նոր իրավիճակ, հար-

---

[57] ՀԱԱ, Ֆ.207, ց.62, գ.210, էջ 41:

[58] 1991 Օգոստոսի 18ի լոյս 19ի գիշերը ԽՍՀՄ բարձրագոյն ղեկավարութեան ներկայացուցիչները, ովքեր դէմ էին Գորբաչովի բարեփոխումների քաղաքականութեանը եւ միութենական նորացուող պայմանագրին, ստեղծեցին Արտակարգ դրութեան պետական կոմիտէ: Կոմիտէն ղեկավարում էր ԽՍՀՄ փոխնախագահ Գենադի Եանաեւը: Նրանք իշխանութիւնից հեռացրեցին Գորբաչովին եւ փորձեցին իշխանութիւնը վերցնել իրենց ձեռքը: Ռուսաստանի ժողովրդավարական ուժերի՝ նախագահ Բորիս Ելցինի գլխաւորութեամբ, վճռականութեան հետեւանքով հնարաւոր եղաւ կանխել յեղաշրջումը, սակայն այդ դէպքերը արագացրեցին ԽՍՀՄ փլուզումը:

[59] ՀԱԱ, Ֆ.207, Ց.62, Գ.5, էջ 20:

[60] Նոյն, էջ 22:

ուած է հասցուել ամբողջատիրութեանը եւ վստահութիւն յայտնեց, որ «Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները Սեպտեմբերի 21ին «ԱՅՈ» պատասխանելով Հայաստանի անկախութեանը՝ իրենց ու սերունդների համար ազատ, արժանապատիւ ապրելու, աշխատելու, բարգաւաճելու աննախադէպ հնարաւորութիւն կը նուաճեն»[61]:

Հայաստանում ծաւալուեց մէկ համակարգից միւսին անցնելու բարդ գործընթաց, որն ընդգրկեց քաղաքական համակարգը, տնտեսակարգը, արժէհամակարգը, առօրէականութիւնը, ընկերային հինմնարկները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ ժողովուրդը դարեր շարունակ զրկուած է եղել անկախութիւնից: Հայաստանի առաջին հանրապետութիւնը (1918-1920) ձեւաւորուեց խիստ բարդ մարտահրաւէրներով լի դարաշրջանում: Պատմական դէպքերի բերումով չկարողացաւ գոյատեւել, սակայն ԽՍՀՄ կազմում հիմք հանդիսացաւ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան ձեւաւորման համար: Հայաստանը խորհրդային կարգերի օրօք ունեցաւ ազգային, տարածքային, մարդկային ներուժի տեսանկիւնից լուրջ կորսուստներ, բայց նաեւ աննախադէպ ընկերա-տնտեսական եւ մշակութային զարգացում ապրեց, երկրագործական երկրից վերածուեց արդիւնաբերական երկրի: Խորհրդային «վերակառուցման» շրջանում արցախեան շարժման շնորհիւ անկախութեան գաղափարը դուրս բերուեց նիրհից, անկախութեան հայտ ներկայացուեց, սկսուեց անկախութեան օրակարգի ձեւաւորումը:

Սովորաբար գաղափարական, մշակութային ձեւափոխումները դանդաղ են ընթանում, մինչդեռ անկախութեան գաղափարի առաջացումից մինչեւ անկախութեան օրակարգի ձեւաւորումը տեւեց ընդամէնը երկու տարի: Այդպիսի կտրուկ փոփոխութիւնների համար լուրջ պատճառներ պէտք է լինէին եւ այդ պատճառները կային:

Խորհրդային իշխանութեան 70 տարիների ընթացքում հայ ժողովրդի գիտակցութեան մէջ խորհրդային քարոզչութեան շնորհիւ մտցուել էր մի գաղափար, որ միայն այդ երկրում հայը կարող է անվտանգ ապրել եւ զարգանալ: Սակայն 1970ականներից սկսած ԽՍՀՄում իյայտ եկան լճացման երեւոյթներ, իսկ 1980ականների սկզբին պարենային դժուարութիւններ: Դա դժգոհութիւն էր առաջացնում խորհրդային հասարակութեան մէջ, այդ թւում Հայաստանում: 1980ականների կէսերին ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Գորբաչովը յայտատարեց քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների մասին: Հրապարակայնութեան, այլախոհութեան հանդէպ մի փոքր հանդուրժողականութեան եւ խօսքի ազատութեան շնորհիւ հայ

[61] ՀԱԱ, Ֆ.207, Ց.62, Գ.4, էջ 135:

հասարակութիւնը արթնացաւ նիրհից, սկսեց վերանայել իր պատմական անցեալը, վերագնահատել եւ ձերբազատուել շատ դոգմաներից:

Վերակառուցումը նաեւ պատմական արդարութիւնը վերականգնելու յոյսեր արթնացրեց, սկիզբ առաւ Ղարաբաղեան շարժումը, որպէս ազգային-ազատագրական շարժում, որը շուտով վերափոխուեց անկախացման համար պայքարի շարժման: Ընկերա-տնտեսական, կենսոլորտի եւ այլ հիմնախնդիրների պաճառով առաջացած դժգոհութեանը գումարուեց ԽՍՀՄում անվտանգութեան երաշխիքների կորուստը: Այդ ամէնը յանգեցրեց անկախութեան օրակարգի առաջացմանը բազմահազարանոց ցոյցերի մասնակիցների մօտ եւ դրա տեղափոխմանը խորհրդարանական հարթակ: 1990ի գերագոյն խորհրդին բախտ վիճակուեց ստեղծել անկախացման օրէնսդրական հիմքերը: Օգտուելով նաեւ արտաքին բարեյաջող հանգամանքներից, յաղթահարելով ռազմատենչ հարեւաններից եկող սպառնալիքների հանդէպ վախերը, ՀԽՍՀն վերածուեց Հայաստանի Հանրապետութեան եւ անկախացման ուղեգիծ սահմանեց: 1991 Սեպտեմբերի 21ի հանրաքուէով քուէարկած «ԱՅՈ»ով սկսուեց անկախ հանրապետութեան կերտման գործընթաց:

Այսօր Հայաստանը դարձեալ կանգնած է լուրջ մարտահրաւէրների ու սպառնալիքների առջեւ: Տարածաշրջանում քաղաքական ուժեղ դերակատարների ուժերի յարաբերակցութեան փոփոխումը, թուրքական գործօնի հզօրացումը, ռուս-թուրքական ժամանակաւոր քաղաքական սիրախաղը վտանգներ են ստեղծել ոչ միայն Հայաստանի անկախութեան պահպանման, այլ նաեւ հայ ժողովրդի գոյապահպանման համար: Այդ իրավիճակում անհրաժեշտ է ստափ ռազմավարական ծրագրի մշակում՝ տարածաշրջանային տարբեր հնարաւոր բեմագրերի հաշուառմամբ, քաղաքականութեան առաջնային եւ երկրորդական խնդիրների տարանջատմամբ, ազգի առողջ ուժերի համախմբմամբ, պատմական անցեալի անաչառ գնահատմամբ:

HOW THE AGENDA OF INDEPENDENCE WAS FORMED AT INDEPENDENCE SQUARE AND IN THE SUPREME COUNCIL (THE PARLIAMENT)

(SUMMARY)

LILIT ZAKARYAN
lilit_zakaryan@mail.ru

Armenia had become a part of the Soviet Union, not of its own free will, but rather in order to resolve the problem of its existence, and for the majority of the Soviet Armenians the strong multinational state of the Soviet Union seemed to be the only guarantee of Armenia's security. During the Soviet years the Armenians lost some territory but accomplished huge socioeconomic and cultural achievements in the absence of freedom of thought and conscience.

Things changed thanks to the policy of Prerestroika, which revived hopes of restoring historic justice. The Artsakh movement was one of Persetroika's results. But the pogroms of Armenians in the Azerbaijai SSR and the intention of covering up those crimes, alongside anti-Armenian attacks in the Soviet mass media, gradually disappointed the Armenians. This put a question mark on the security concerns of the Armenians in the USSR. Next to the national liberation agenda there arose the issue of independence, which underwent three stages of development.

The first stage, which was perhaps the most difficult and the longest, was the shaping of the concept of independence in the minds of the Armenian polity and its promotion as an agenda point. It resulted in the entrance of the opposition forces into the Soviet Armenian parliament.

During the second stage a legal framework corresponding to the agenda of independence was shaped and the Independence Declaration was accepted.

The third stage was the deepening of the process of independence, which ended with the referendum for independence.

It is not easy to maintain a free and independent nation state. Today the Republic of Armenia is facing serious worldwide political challenges. Nevertheless, an independence generation has been formed that sees its future only in an independent state.